

Ծնողներու Իրաւունքներ. Ընտանիքներու համար Կանուխ Սկիզբի Ուղեցոյց (վերանայուած 2026-ին)

Այս փաստաթուղթը կը ներառէ մեջբերումներ կանոնադրութիւններէ եւ կանոններէ

- CFR-ը (Code of Federal Regulations) ցոյց կուտայ Դաշնակցային Կանոններու Օրէնսգիրքը
- GC-ն (Government Code) ցոյց կուտայ Կառավարական Օրէնսգիրքը Կանուխ Սկիզբը կառավարող պետական օրէնքին համար
- CCR-ը (California Code of Regulations) ցոյց կուտայ Զաւիճորնիայի Կանոններու Օրէնսգիրքը

Եթէ հարցումներ ունիք իբրեւ ծնող, Կանուխ Սկիզբի ձեր իրաւունքներուն մասին, հաճեցէք կապ հաստատել ձեր շրջանային կամ տեղական կրթական ծառայութեան հետ (LEA)

ՏԵՂԵԿԱՑՈՒԱԾ ՀԱՄԱՍՏՈՒԹԻՒՆ

Պէտք է գրաւոր արտօսութիւն տաք նախքան ձեր երեխան որեւէ քննութիւն կամ ծառայութիւններ ստանայ Կանուխ Սկիզբէն: Ծրագիրը ձեր արտօսութիւնը պէտք է ունենայ որպէսզի ձեր կամ ձեր երեխային մասին տեղեկութիւններ կիսէ: Այս մէկը Տեղեկացուած Համամտութիւն կը կոչուի: [34 CFR 303.7, 34 CFR 303.420]

- Դուք իրաւունքը ունիք բոլոր տեղեկութիւնը ստանալու ձեր տան մէջ գործածած լեզուով: [34 CFR 303.7]
- Պէտք է գրաւոր արտօսութիւն տաք հետեւեալին համար.
 - Որեւէ քննութեան կամ գնահատումի: [34 CFR 303.420(a), 17 CCR 52162(a)]
 - Սկսելու որեւէ Կանուխ Սկիզբի ծառայութիւններ: [34 CFR 303.420(a), 17 CCR 52162(a)]
 - Կիսելու ձեր երեխային անձնական տեղեկութիւնները ուրիշներու հետ: [34 CFR 303.414, 17 CCR 52162(B), 17 CCR 52169]
 - Գործածելու ձեր բժշկական ապահովագրութիւնը եթէ ձեզի համար յաւելեալ ծախս պիտի ըլլայ կամ պիտի նուազեցնէ ձեր նպաստները: [17 CCR 52162(d)]
- Դուք կրնաք վերցնել ձեր արտօսութիւնը, դադրեցնելու համար ծառայութիւններ կամ քննութիւններ որեւէ պահուն գրաւոր կերպով: [34 CFR 303.7(c), 34 CFR 303.420(b), 17 CCR 52162(c)]

ԳԱՐՏՆԱՊԱՅՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐԽԻՆԵՐՈՒ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹԻՒՆ

Ձեր երեխային եւ ընտանիքին մասին ձեր տրամադրած բոլոր տեղեկութիւնները անձնական են եւ պաշտպանուած Միայն մարդիկ որոնք ուղղակի կ'օգնեն ձեր երեխային կրնան տեսնել այս տեղեկութիւնները: [34 CFR 303.29, 17 CCR 52160(a)]

- Դուք իրաւունքը ունիք տեսնելու եւ պատճեններ ստանալու ձեր երեխայի արխիւներէն: [34 CFR 303.405]
- Դուք ձեր արխիւներէն պատճեններ կամ բացատրութիւն կրնաք ստանալ, ձեր խնդրանքէն առաւելագոյնը մինչեւ հինգ աշխատանքային օր ետք: [17 CCR 52164(b)]
- Դուք կրնաք խնդրել ծրագիրէն որ սրբագրէ կամ վերցնէ ձեր երեխայի արխիւներուն մէջ գտնուող սխալ տեղեկութիւնները: [17 CCR 52168]
- Եթէ ծրագիրը չսրբագրէ արխիւ մը, դուք կրնաք տնօրէնին հետ հանդիպում մը խնդրել, անոր մասին գրուցելու համար: [17 CCR 52168(c)]
- Ծրագիրը պէտք է բացատրէ ձեզի, որ ինչպէս ձեր ընտանիքի արխիւները ապահով եւ գաղտնի պահէք: [34 CFR 303.404, 34 CFR 303.420, 17 CCR 52162, 17 CCR 52165, 17 CCR 52169]

ԳՆԱՀԱՏՈՒՄ

Քննութիւնը (որ գնահատում կը կոչուի) կը կատարուի մասնագէտներու խումբի մը կողմէ, տեսնելու համար թէ ձեր երեխան իրաւասու՞ է Կանուխ Սկիզբի: [GC 95014, 17 CCR 52022]

- Դուք պէտք է տեղեկանաք ձեր բոլոր իրաւունքներուն մասին: [34 CFR 303.421, GC 95020(c), 17 CCR 52161]
- Դուք պէտք է գրաւոր արտօսութիւն տաք նախքան որեւէ քննութիւն սկսի: [34 CFR 303.420, 17 CCR 52162]
- Դուք իրաւունքը ունիք մասնակցելու քննութեան գործընթացին եւ իրաւասութեան վերաբերեալ կատարուող զրոյցին: [34 CFR 303.7, 34 CFR 303.321, 34 CFR 303.420, GC 95020, 17 CCR 52040(d), 17 CCR 52082, 17 CCR 52084]

- Գնահատումը պետք է ամբողջականապես Կանոնի Սկիզբի ուղղորդման թուականն առաւելագոյնը մինչեւ 45 օր ետք: [34 CFR 303.310, 17 CCR 52086(a)]
- Դուք իրաւունք ունիք արդիւնքներէն գրաւոր պատճեն մը ունենալու: [34 CFR 303.310, 17 CCR 52086(a)]
- Զննութիւնը պետք է.
 1. Կատարուի տան մէջ գործածուող լեզուով, ինչ որ կարելի է: [34 CFR 303.321(a)(6), 17 CCR 52084(d)(4)]
 2. Ըլլայ արդար եւ որեւէ մէկուն հետ պետք չէ վարուիլ տարբեր կերպով, իրենց ցեղին կամ մշակոյթին պատճառով: [34 CFR 303.321(a)(4), 17 CCR 52082(g)]
 3. Կատարուի որակաւորուած արհեստավարժներու կողմէ: [34 CFR 303.321, 17 CCR 52082, 17 CCR 52084]
 4. Խմբային որոշում մը ըլլայ: Իրաւասու ըլլալը հիմնուած չէ միայն մէկ քննութեան վրայ: [34 CFR 303.321, 17 CCR 52082]
 5. Ամբողջացուցէք: Խումբը պիտի քննէ բոլոր զարգացման ոլորտները (մտածել, շարժիլ, խօսիլ, հասկնալ, ինքզինք օգնելու կարողութիւններ, եւ ընկերային-զգացական կարողութիւններ): [GC 95014, 17 CCR 52022]
- Զննութիւնը պետք է կատարուի տեղ մը, ուր երեխաներ եւ մանուկներ սովորաբար ժամանակ կ'անցնեն եւ հարմարաւետ է, ինչպէս՝ տունը, զբօսայգին, ցերեկային խնամքի կեդրոնը, եւայլն: [17 CCR 52082(j), 17 CCR 52084(e)]
- Դուք կրնաք ընտրել հարցազոյցներու մասնակցելու, ձեր ընտանիքի աղբիւրներուն, կարիքներուն, եւ մտահոգութիւններուն մասին: [34 CFR 303.321, 17 CCR 52084, 17 CCR 52106]

ԱՆՀԱՏԱԿԱՆԱՅՈՒԱԾ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐ (IFSP)

Եթէ ձեր երեխան իրաւասու է Կանոնի Սկիզբի, խումբը Անհատականացուած Ընտանեկան Ծառայութեան Ծրագիր մը (IFSP) կը ստեղծէ: Այս մէկը գրաւոր ծրագիր մըն է որ կը մանրամասնէ մտահոգութիւնները, նպատակները, եւ ծառայութիւնները ձեր երեխային եւ ընտանիքին համար: [17 CCR 52100]

- Առաջին IFSP հանդիպումը պետք է կատարուի ձեր երեխայի ուղղորդումէն առաւելագոյնը մինչեւ 45 օր ետք: [34 CFR 303.20, 34 CFR 303.342, GC 95020(b), 17 CCR 52102]
- IFSP-ն պետք է վերատեսութեան ենթարկուի ամէն 6 ամիս եւ թարմացուի նուազագոյնը տարին մէկ անգամ: [34 CFR 303.342, 17 CCR 52102]

IFSP հանդիպումներ ծնողներու համար.

- Դուք իրաւունք ունիք հանդիպումը ունենալու ձեզի հարմար ժամուն եւ վայրին, ձեր տան մէջ գործածուող լեզուով: [34 CFR 303.342, 17 CCR 52102]
- Դուք պետք է գրաւոր ծանուցում ստանաք հանդիպումէն առաջ: [34 CFR 303.342, 17 CCR 52102]
- Դուք կրնաք հանդիպումին որեւէ մէկուն հրաւիրել, ներառեալ՝ ընտանիքի անդամներ կամ փաստաբան մը: [34 CFR 303.343, 17 CCR 52104]

IFSP փաստաթուղթերու համար, իբրեւ ծնող.

- Դուք պիտի ստանաք IFSP-ի անվճար պատճեն մը, ձեր տան մէջ գործածուող լեզուով: [34 CFR 303.25, 34 CFR 303.409, 17 CCR 52102]
- Դուք պետք է գրաւոր արտօնութիւն տաք ծրագրի իրաքանչիւր ծառայութեան համար: Դուք կրնաք այդ ըսել

որոշ ծառայություններում, եւ ոչ՝ ուրիշներում: Ոչ ըսելը մէկ ծառայութեան, արգելք չէ որ ձեր երեխան այլ ծառայություններ ստանայ: [34 CFR 303.342, 34 CFR 303.420, 17 CCR 52102]

- Ծառայություններ պետք է մատուցուին ձեր երեխայի “բնական միջավայրին” մէջ (ինչպէս տունը կամ ցերեկային խնամքի կեդրոնը): Եթէ ոչ, ծրագիրը պետք է պատճառը բացատրէ գրաւոր: [34 CFR 303.13, 34 CFR 303.344, 17 CCR 52106]
- Ծրագիրը պետք է ձեզի գրաւոր ծանուցում մը դրկէ *նախքան* առաջարկելը կամ մերժելը որ փոխէ ձեր երեխային իրաւասութիւնը, քննութիւնը, կամ ծառայությունները: Այս ծանուցումը պետք է բացատրէ թէ ի՞նչ կ’ուզեն ընել, ի՞նչու կ’ուզեն ընել այդ մէկը, եւ ինչպէ՞ս դուք կրնաք չհամաձայնիլ: [34 CFR 303.421, 17 CCR 52161]

ՄԻՋՆՈՐՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ, ՊԱՏՇԱՃ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԼՍՈՒՄՆԵՐ ԵՒ ՊԵՏԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲՈՂՈՔՆԵՐ

Եթէ դուք չէք համաձայնիր ձեր երեխայի իրաւասութեան, քննութեան, կամ ծառայություններուն հետ, դուք իրաւունքը ունիք միջնորդութեան, պատշաճ ընթացակարգի վերաբերեալ խումներու, եւ պետական մակարդակի բողոքներու: Կանուխ Սկիզբի ծրագիրը պետք է տեղեկացնէ ձեզի այս այլընտրանքներուն մասին: [34 CFR 303.432, 17 CCR 52170]

ՄԻՋՆՈՐՂՈՒԹԻՒՆ

Այս մէկը կամաւոր, անպաշտօն, եւ խորհրդապահական հանդիպում մըն է չեզոք անձի մը հետ (միջնորդ) օգնելու համար ձեզի, եւ Կանուխ Սկիզբի ծրագիրին, որ փորձէք համաձայնութեան մը յանգիլ: Դուք կրնաք միջնորդութիւն խնդրել, իբրեւ վեճ մը լուծելու առաջին ընտրանքը կամ որեւէ պահու, պատշաճ ընթացակարգի վերաբերեալ խումներու կամ բողոքի ընթացակարգի ընթացքին: [34 CFR 303.431, 17 CCR 52173]

- Դուք կրնաք միջնորդութիւն խնդրել ձեզի հարմար ժամուն եւ վայրին: [34 CFR 303.431, 17 CCR 52172]
- Դուք կրնաք ոչ ըսել միջնորդութեան եթէ չէք ուզեր մասնակցիլ: [34 CFR 303.431, 17 CCR 52173]
- Չրոյցները անձնական են եւ չեն կրնար օգտագործուիլ ապագայ խումի մը ընթացքին: [34 CFR 303.431, 17 CCR 52173(j)]
- Դուք կրնաք ձեր հետ այլ անձ մը կամ փաստաբան մը բերել հանդիպումին: [17 CCR 52173(h)]
- Եթէ համաձայնութեան մը յանգիք, այդ մէկը գրաւոր պիտի ըլլայ: [34 CFR 303.431, 17 CCR 52173(i)]

ՊԱՏՇԱՃ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԼՍՈՒՄՆԵՐ

Այս մէկը պաշտօնական, իրաւական խում մըն է վեճը լուծելու համար: [34 CFR 303.430, 17 CCR 52172]

- Դուք կրնաք խում մը խնդրել եթէ չէք համաձայնիր ձեր երեխայի իրաւասութեան եւ ծառայություններուն հետ: [17 CCR 52172(a)]
- Մինչ խումը տեղի կ’ունենայ, ձեր երեխան կը շարունակէ ստանալ ծառայությունները իր IFSP-ին մէջ (բացի եթէ դուք եւ ծրագիրը համաձայնիք փոփոխութեան մը շուրջ կամ ձեր երեխան դուրս գայ ծրագիրէն 3 տարեկանին): [34 CFR 303.209, 17 CCR 52172(g)]
- Վերջնական որոշում մը պետք է առնուի ձեր խնդրանքէն առաւելագոյնը մինչեւ 30 օր ետք: [34 CFR 303.437(b), 17 CCR 52172(e)]

ՊԵՏԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲՈՂՈՔ

Դուք կրնաք պաշտոնական, գրաւոր բողոք մը ներկայացնել Զալիֆորնիայի Չարգացման Ծառայութիւններու Բաժանմունքին (Department of Developmental Services (DDS)) եթէ կը հաւատաք որ ծրագիրը պետական կամ դաշնակցային օրէնք մը խախտած է, ինչպէս նաեւ՝ խնդիրներ լուծելու, ինչպէս իրաւասութեան կամ ծառայութիւններու մերժումը: [17 CCR 52170]

- Բողոքը գրաւոր պէտք է ըլլայ եւ՝ ստորագրուած: Խնդիրը պէտք է բացատրուած ըլլայ մանրամասնութեամբ: [34 CFR 303.434, 17 CCR 52170]
- Ձեր բողոքը պէտք է ներառէ ձեզի հետ կապ հաստատելու տուեալները [17 CCR 52170(g)]; երեխային անունն ու հասցեն [34 CFR 303.434]; շրջանային կեդրոնին, LEA (տեղական կրթական ծառայութեան), կամ ծառայութեան մատակարարին անունը [17 CCR 52170(g)]; եւ ինչպէ՞ս կը կարծէք որ խնդիրը պէտք է լուծուի: [34 CFR 303.434].
- Դուք պէտք է պատճեն մը դրկէք այն ծառայութեան, որուն մասին դուք կը բողոքէք: [34 CFR 303.434, 17 CCR 52170(g)]
- DDS-ը պէտք է հարցաքննէ եւ վերջնական գրաւոր որոշում մը տայ ձեզի առաւելագոյնը 60 օրէն: [34 CFR 303.433, 17 CCR 52171(a)]
- Եթէ DDS-ը գտնէ որ ծառայութիւնը սխալ էր, ան ուղղիչ գործողութիւններ պիտի հրահանգէ Այս մէկը կրնայ ներառել պարտադրել ծառայութեան, որ ծառայութիւններ մատակարարէ կամ վճարումներ վերադարձնէ ծառայութիւններու համար որ դուք վճարած էք: [17 CCR 52171]

Իբրեւ ծնողներ, բողոքի գործընթացի ընթացքին:

- Ձեր բողոքը գրելու համար, դուք կրնաք օգնութիւն ստանալ ձեր ծառայութեան համադրողէն կամ փաստաբանական խմբակէ մը (ինչպէս՝ Չարգացման Զաշմանդամութեան Պետական Խորհուրդը (State Council on Developmental Disabilities) կամ Զաշմանդամութեան Իրաւունքներ Զալիֆորնիա (Disability Rights California)): [17 CCR 52170]
- Ձեր երեխայի տուեալները գաղտնի պիտի պահուին: [17 CCR 52169]
- Զարգացնութեան ընթացքին դուք կրնաք DDS-ին յաւելեալ տեղեկութիւններ յանձնել: [34 CFR 303.433, 17 CCR 52171(a)]
- Դուք պէտք է վերջնական գրաւոր որոշում մը ստանաք, DDS-ը ձեր բողոքը ստանալէն առաւելագոյնը մինչեւ 60 օր ետք: [34 CFR 303.433, 17 CCR 52171(a)]
- Դուք իրաւունքը ունիք նաեւ բողոք մը ներկայացնելու եթէ ծառայութիւն մը չի հետեւիր պատշաճ ընթացակարգի վերաբերեալ լուսնի մը վերջնական որոշումին: [34 CFR 303.433, 17 CCR 52171(e)]

Միջնորդութեան կամ պատշաճ ընթացակարգի վերաբերեալ լուսնի ձեր խնդրանքը դրկեցէք.

Office of Administrative Hearings
Attention: Early Start Intervention Section
2349 Gateway Oaks Drive, Suite 200
Sacramento, CA 95833-4231
Հեռաձայն. (916) 263-0654
Ֆաքս. (916) 376-6318

Ձեր ստորագրուած բողոքը դրկեցեք.

Department of Developmental Services
Attention: Community Appeals and Resolutions Branch
1215 O Street, MS 8-20
Sacramento, CA 95814
Հեռաձայն. (833) 538-3723
Ֆաքս. (916) 654-3641
Email: appeals@dds.ca.gov

Մանրամասն տեղեկութիւններ որոնք կը վերաբերին [Ճնողներու Իրաւունքներուն եւ Կիրառելի Կանոններու](#) կը գտնուին հոս.



Կանուխ Սկիզբի վերաբերեալ յաւելեալ տեղեկութիւններու համար, հաճեցեք կապ հաստատել Early Start Baby Line-ին հետ, հետեւեալ թիւին. 800–515–BABY (800-515-2229) կամ earlystart@dds.ca.gov.